

ազնիւ մամուլի, երբ նիւթապաշտութեան սկսու զները օրէցօք կրկնապատկում են և մեծ կարքի է զգացում հոգմկու ձայնով այդ խելակորոյն հոսանքի առաջն առնելու, հայ կեանքի անմիջթարական երեոյթները ցոյց տալով յուսուլի ապագայի՝ աշխատանքի ու ինքնազոնութեան կոչն անելու, հայ օրաթերթի ապահովութեան կարիքը աւելի քան ցանկալի է:

Հայ ժողովրդի նման նրա բոլոր հիմնարկութիւններն ու գործիչները միշտ էլ տագնապանների, յուսահատութեան ճիշերի անվերջ շարերի են ականատես լինում և միայն հոգու էն ամենամաքուր անկիւնում թաղուած սիրուն ապագայի վառ լոյսն ու կենդանի հաւատն է, որ միշտ էլ ջերմութիւն է առեւել ցուրտ շրջտպատին ու տաքսցրել կաշտացած ձեռքերը կրկին աշխատելու, կրկին խօսքն ու գրիչը անվեհեր կերպով գործադրելու:

«Մշակ»-ը իւր 40-ամեայ գոյութեան ընթացքում ցոյց է տուել այդ օրինակ գործունէութեան հրապուրիչ պատկերը՝ մի կողմից թերթի նիւթական ապահովութեան սրտամաշ հոգսերի գէմ արեւնաքամ պայքար մղել, միւս կողմից՝ զրիչը անկաշառ օր ու գիշեր գործածել հայ ժողովրդի մտաւոր-բարոյական, տնտեսական-հասապական ախտերը վանելու և նոր, թարմ գողափարներ ցանելու: Կրկնապատիկ պայքարին դիմադրելը շատ ոյժեր է սպառել, շատ հոգեմաշութեան ժամեր ստեղծել նրա առաջնորդների և աշխատակիցների համար և այդ արիւնքինք աշխատանքի 40-երկար ու ձիգ տարիների տօնն է կատարում:

Հայ մամուլի վրայ ծանրացած պարաքը չափազանց մեծ է, հայ ժողովրդով նրանից խոշոր ակնկալութիւններ է ունեցել և ունի, հայ մտաւորականը խիստ պահանջներ է դնում նրա վրայ, սակայն մրան արդեօք նոյնչափ այդ պահանջկոտաննական աշխատել են և աշխատում են առնուազն հայ մամուլի աշխատաւորին ապահովել, գոնէ հայ թերթի զուտ տնտեսական կողմը՝ հրատարակութեան ծախսերը հոգալ:

Կարգացէք մեր օրաթերթերի, մեր մամուլի պատմութիւնը և կտեսնէք, որ հայ խմբագրելը, հայ ժուրնալիստը ոչ միայն զրել, սրբագրել, թերթը ցրել է, ոչ միայն գիշերները անցուն է անցկացրել, այլ և իւր օրական պարէնից տնտեսել է թերթի տպագրութեան ծախսերը հոգալու: Ահա ի՞նչ զոհաբերութիւններ է յանձն ա-

ռել հայ մամուլը:

Եւ այժմ, երբ այդ չարքաշ աշխատաւորներից անդրանիկի Գր. Արծրունու փայփայած ու խնամած թերթի՝ «Մշակ»-ի յօրելիանն է կատարուելու, հայ հասարակութիւնը չպէտք է մոռաց այ իւր ստացուծ բարիբները, չպէտք է աշքեւ փակի, ականջները ծածկի իւր բրանաջան աշխատաւորի ապահովութեան գործի առաջ: Երախտապարտ է հայ ժողովրդովը «Մշակ»-ին և նոր պարտաւոր է իւր այդ բարոյական պարտքը կատարել, ցոյց տալ, որ ինքը անշարժութեան չի մտանուած, որ ինքը հէնց յանուն իւր ինկ յառաջապիմութեան գիտակցութեան հասած իւր սիրելի թերթին ապահովում է, որ ինքն կրկին ու կրկին բարու, վահմի ու գեղեցիկի բարովը կարդայ, ուղին ցոյց տայ և նոյն տոկունութեամբ առաջնորդէ դէպի հոգու ազնուացման բարձրութիւնը:

Սեր իրականութիւնը շատ տեղեր ունի մշակել, շատ վայրեր՝ հնձիլ և խիստ բիչ չարքաշ մշակներ կան այդ սրբազն գործը կատարելու: «Մշակ»-ը 40 տարի շարունակ հայ անդաստանի «սակաւ մշակներից» է հղել և անգագրում հայ միտքն է պարաբարացրել, հայ սիրալ աղնուացրել, հայ լեզուն տարածել, հայ զիւրը սիրելի դարձրել:

Աղքատիկ հայ մամուլի վաստակաւոր թերթին ցանկանում հնք յառաջապիմութեան ասպարէզում երկար օրեր, առկունութիւն գեռ շատ խոչ ու խութեր անցնելու, գեռ շատ խաւար անկիւններ լուսաւորելու:

## ՀԱՅ ՑՊԱՐԱՆՆԸ

«Որքան գլուխ, այնքան կարծիք» առածն է յիշում մարդ ակամայից, երբ հետեւմ է տպագրութեան 400-ամեակը յաւերթացնելու համար հզած առաջարկներին: Օր օրի վրայ նորանոր առաջարկներ, թերթի իւրաքանչիւր համարում նոր տեսակի տօնի ըմբռման արտայտութիւն: Աւրախալի է տեսնել, որ այդ կուլտուրական տօնը շատերի սրտին մօտ է և կենդանի հետաքրքրութիւն է առաջացնում:

Այլ կերպ չէր կարող լինել որովհետեւ տօնը այնքան բովանդակալի է, այնքան բազմակազմանի և մեր կեանքի հետ այնպէս սերտ ա-

ոնչութիւն ունի, որ մի կամ երկու առաջարկով  
դժուար է նրա ամբողջութիւը ընդգրկել, նրան  
վայելուչ կերպարանը տալ: Որքան մեծ է  
նիւթը, որքան խորն է բովանդակութիւնը, այն-  
քան շերտաւորութիւնով է երեսն գալի այն և  
այնքան բազմապիսի ըմբռնման է ենթարկում:

Սակայն այդ կինդղանի տեսական հետաքրքրութեանը գժբախտաբար չի համապատասխանում գէթ կիսով չափ գործնականը։ Դիոժինչի այսօր կազմւում են յանձնաժողովներ՝ Տփխիսում, էջմիածնում, Բագում, Պօլսում, Ամերիկահայ գաղութում, որոնք իրենց հերթին մասամբ եղած առաջարկներն են կարգի բերում, մտասամբ էլ նոր առաջարկներ մտցնում, որոնց իրագործումը գժբախտաբար անկարելի պիտի լինի, ոչ միայն այս տարի, այլ և մօտագայ տարիներում։

Եղած առաջարկներից սմանք անմիջական  
տուընչութիւն ունին տպագրութեան հետ, իսկ  
միւսները աւելի խնդրի կուլտուրական կողմն հն  
ընդգրկում և իրքի աւելի ծանրակշիռ հարցեր  
գժոււար իրականանալի են առնուազն մի սերնդի  
համար, դրանք դեռ բաւական նիւթ են մատա-  
կարարում: Առաջին տեսակի առաջարկները ա-  
ւելի գործնական նշանակութիւն ունին և հեշտ  
լուծելի են՝ այդպիսիների թուին պէտք է աւե-  
լացնել և հայ տպարանի պատմութեան խնդիրը:

Տիկիսի յօրեւէնական յանձնաժողովը արդէն լայտարարել է, որ Հայկական տպագրութեան 400-ամեայ պատմութիւնը պէտք է հրատարակէ և խոստացել է գրողին 500 ռուբլի մրցանակ տալ: Այդ աշխատութեան մէջ անշուշտ տեղ է բննելու և հայ տպարանը իւր պատմութեամբ, իւր ունեցած նշանակութեամբ միք կհանքում:

Անշուշա տպագրութեան յօբեկեանի էսական  
կողմը նրա ունեցած կուլտուրական նշանակու-  
թիւնն է, սակայն դիքքը՝ կուլտուրան տարածող  
ու ընդհանրացնող այդ միջոցը, ինքն էլ մի այլ  
հիմնարկութիւն մէջ է իւր ձևակերպումն ստա-  
նում, ինչպէս սովորական է դարձել ասին՝ «լոյս  
ահանում»։ Եւ այդ հիմնարկութիւնը՝ տպարաւանն է։

Հայ տպարանը իւր սկզբնաւորութեան օրերում կարելի է ասել ենթակայ է եղել մեծ դժուարութիւնների. խոչնդուոններ, որոնք Եւրոպական ժողովուրդների համար գոյաւթիւն չեն ունեցել իսկ ասիսկան բռնաւթեան տակ հեծող հայ արիւնաքամ ժողովրդի համար զարձել

ին նոյնիսկ գերմարդկային ճիբեր տպահանջող՝  
Աշքի անցրէք թէկուզ լէօ-ի Հայկական տպա-  
գրութեան պատմութեան ա. հատորը և կտեսնէք  
պարսկական առևլցաւամ խաների աշքածակութիւ-  
նը հազիւ մի կերպ բաւարարող հայ և կեղեցա-  
կանները ի՞նչ ահազին դժուարութիւններ են  
կրել հայկական տովարան հիմնելու համար, ի՞նչ  
նիւթական ու բարոյական զրկանքներ են կրել  
տառեր գտնելու, մայտեր ձուլելու, շարելը սո-  
վորելու և այլ տպագրական արհեստին վերաբե-  
րող գործազութիւնները խրացնելու համար

Ակամայից՝ մարդ կարգալով այդ գեռ թե  
թևոկի նկարագրուած երկար ճանապարհորդու-  
թիւնների, ձախորդութիւնների նկարագիրը այն  
միսիթարական մաքովն է հրաւում, որ հայ ժողո-  
վրդի մէջ յառաջադիմելու, կուլտուրապէս զար-  
գանալու ձգտումը իւր արմատն ունի և այնքան  
կինդանի ու խորն է այդ, որ զանտական տեսակի  
ու որսակի անձնաւորութիւնների խրախուսիչ օ-  
րինակներ է արտադրում:

Հայ տպարաննը, մեր կեանքի կուլտուրական  
զօրեղ գործոն ոյժը հանդիսանալով, սկզբնական  
շրջանում հոգեռականների ձեռքին էր և նրանց  
հովանու տակ կամաց կամաց զարգանում էր:  
Ժամանակի ընթացքում, երբ զբքի պահանջը  
զարգանում է, երբ զբականութիւնը, գիտու-  
թիւնը սկսում է աշխարհականանալ, տպարանն էլ  
դառնալով արդիւնաբերական շահագործման ալ-  
բիւր, անցնում է աշխարհականների ձեռքը և  
այժմ տպարանների մեծ մասը գտնում է աշ-  
խարհականների ձեռքում:

Սակայն հայ տպարանը որքան սկզբում  
ուժեղ թափով է սկզբնաւորուում, որքան առաջին  
շրջանում խրախուսիչ պատկեր է ներկայացնաւու,  
նոյնպիսի ոյժով առաջ չէ գնում և նրա ծալ-  
կումն ու բարգաւաճումը կիսատ է մնում: Մին-  
չև այժմ էլ ոչ ուսահայեմս, ոչ տաճկահայերը  
չունինք օրինակելի հայ տպարան, իւր տառերի,  
տիպի, զարդերի և այլ տիխոնիկական յարմա-

բութիւնսկրի կողմայից Եղած բոլոր ազգաբնակչութեան մասից ամենից կատարելագործուածը պէտք է համարել Վեհնայի և Վեհնապիկի մխիթարեանների տպարանները, որուակ իրօք կարելի է տեսնել տպարանական արուեստին վայել յարմարութիւններ և հէնց այդ տպարաններում լոյս տեսած գրքերը, ժամանակագրական կարգով միմեանց հետևից շարելով, կնկատենք որբան հայ տպարանը ծաղկել բարգաւաճել է:

Հայ տպարանի, յատկապէս ոռւսահայերիս  
մէջ, աննախանձելի վիճակը ունի անշուշտ պատ-  
ճառներ, որոնցից զլիաւորներն են՝ մեր ժողո-  
վրդի՝ անզբագիտութիւնը, մտաւորականների  
հայ գրքով չհետաքրքրուելը և զիրք չառնելը,  
այլ և յատուկ տպարանական գործով զբաղու-  
լու, հայերէն հրատարակութիւններ անելու հա-  
մար կազմուած ընկերութեան պակասը։ Առաջին  
երկու տպարանները Խանը հարցեր են և ժամա-  
նակի ու այլ բոլոր պայմանների խնդիրը, խակ  
վերջինը հնարաւոր էր իրագործիլ գեռ աւելի  
վաղ, ուր մնաց որ այժմ, եթէ այս մասին ժա-  
մանակին հոգ տարուէր։ Մասամբ էջմիածինը  
կարող էր այդ պահանջին բաւարարութիւն տար  
ինչպէս արդէն մթիթարեան ուխտերը ցոյց են  
տուել իրենց օրինակով։ Էջմիածինը հնարաւո-  
րութիւն ունէր նիւթականի և մտաւորի տեսա-  
կէտից և տպարանական արուեստը ծագկեցնել  
և էժան գրքեր հրատարակելով ժողովրդին ըն-  
տելացնել հետզհետէ գրքին, գիրք գնելը դար-  
ձնել պահանջ։ Այստեղ անկարելի է մանրամասն  
նկարագրել այն գործնական միջոցները, որոնք  
հնարաւոր են այդ նպատակին հասցնելու համար,  
յիշեմ միայն օրինակի համար աչքներիս առաջ  
գործող ոռւսական հրատարակչական ընկերու-  
թիւններ, որոնք մեծ մասամբ տպարանատէրեր  
են և զբաղւում են տպարանական գործերով։

Իսկ աւելի լաւը և անհրաժեշտն է աշխարհականներից կազմուած մի ակցիօնիրական հրատարակչական ընկերութիւն, որը գուատ արդիւնաբերական նպատակ ունենալուց զատ հետեւէ նաև կուլտուրական գործին՝ տպագրութեան արուեստի՝ դարձացմանը մեզանում՝ գրքեր, պատկերներ, զանազան այլրոմներ և այլն տպագրական գործեր ու արտագրութիւններ հրատարակելով:

Հայ տպարանի գարգարման խնդիրը անշուշտ սերա առնչութիւն ունի մեր կուլտուրայի դարբացման ընդհանուր խնդրի հիտ և անհրաժեշտ է ուրիշն այս մասին ևս հոգ տանիւ, մտածել յօրելինական հանդէսը այս կողմից ևս յաւերքացնելու համար:

Գեղեցիկ, մաքուր, լաւ թղթի վրայ տըպ-  
ուած գիրքը և հեշտ է կարդացնում և գրաւիչ է  
մարդու գեղասիրական պահանջներին բաւարա-  
րութիւն է տալի ու զարգացնում է մարդու էս-  
տէտիկական ճաշակը։ Խըրաքանչիւր գրասէր—  
ընթերցասէր լաւ գիտէ, որքան հաճելի է գիշե-  
ցիկ տպագրուած գիրքը կարգալ և ընդհանուրա-

կը որքան անհաճոյ է մանր տառերով, նիդ տո-  
ղերով ու վատ թղթի վրայ տպուած գրքի ըն-  
թերցումը:

Հայ տպագրութեան բարդաւաճմանը նաև  
իսանձախնդիր եղողները պարտաւոր են հայ տպա-  
րանի կատարելագործման մասին հոգ տանելը  
Այս խնդրի իրագործումը ծանրանում է ոչ այն-  
քան յօրելենական յանձնաժողովների վրայ, որ-  
քան մասնաւոր անհատների, որոնք իրենց գուշ-  
մարներով ստեղծել են մի միջ, այսպէս ասած,  
կեղբոնական տպարան, որը տպագրութեան ար-  
ուեստիզարդացումնու գրքի ժողովրդականացումը՝  
Էֆան հրատարակելով պէտք է իրեն նպատակ դնէ,

### Pessimist

ԴԱՐՁԵԱՆ ՀԸ ԼԱԵՑԻՑ

(Ախմակերպողի հայերուն)

Սբանից 4-5 ամիս առաջ Սիմֆերոպոլի «ЮЖН. ВЕД.» թերթի միջոցով դիմուցի առնասարակ Դրիմի և մասնաւորապէս Սիմֆերոպոլի հայերին և յիշեցրի նրանց, որ Սիմֆերոպոլի հայոց գերեզմանատան մի անկիւնում անհոգ-անխնամ, համարեա գետնին հաւապարուելու մօտիկ, մի գերեզման կայ:

Այդ անփառունակ հողակոյտի տակ թաղուած է այն մարդու դիակը, որ տասնհակ տարիներ իւր կեանքը շաղկապատ էր Սիմֆերոպոլի հայ համայնքի հասարակական կեանքին և որի անունը ծանօթ է իւրաքանչիւր հայի:

Գէսրգ Դոդոխեանն է դա:

«Ծիծեռնակ»-ի մեծ հեղինակը, հայ մտքի լուսաւոր արշալոյսի աւետարելներից մէկը, Դորպատից փառւած հայ մտաւոր վերածնութեան առաջին շաղերը արտապողոջներից մէկը:

Ես յիշեցի ձեզ, որ անխնամ է այդ նուի-  
բական շիրիմը, որ մօտ է այն օրը, եթե հողին  
կը հաւասարուի այդ կոյարը:

Q<sub>L</sub> L<sup>u h g l i p :</sup>

Զբաղուած էիք տէրտէրական էպօպէի ուսումնասիրութեամբ:

Յայ նորես այդ հարցը կրկին բարձրացաւ  
հայ լրագրութեան էջերում:

«Մշակ»-ի մէջ անցեալները Յ. Սպինդիա-  
արեանը դարձեալ յիշեցրից:

Դարձեալ չը լսեցիք: